

անհաւանական չէ, որ Յովհաննէս վրդ. այս բազմա-
ծախս շինութիւններուն ի նպաստ հանգանակութեան
մը ձեռնարկելու համար մինչև Պոլիս ժողովարարու-
թեան գիմած ըլլայ:

Իսկ միջամտող վանեցիներուն մէջ էր հաւա-
նորէն խոճա Ռուհիջան մեծ եպարքոս Խուսրէվփաշայի
Քիւրքճի պաշին, որ չափազանց ազդեցիկ էր Պոլսոյ
մէջ, սկսեալ 1620-ական թուականներէն. ինքն էր, որ
վանի եկեղեցիներուն կառուցման հրամանը առած էր,
ինչպէս կը հաստատէ Դաւրիժեցի (1):

Իկդ ատեն, ինչպէս գիտենք պատմութենէն,
Պոլսոյ հայ գաղութը չափազանց խառնակ կացութեան
մը մէջ կը գտնուէր. «սերսեցի»ներու և «գրսեցի»նե-
րու պայքարին ամէնէն տաք շրջանն էր:

Մէկ կողմէն այս սոսկալի պայքարը, միւս
կողմէն այն իրողութիւնը, թէ եկեղեցականները
իրարու ձեռքէ կ'ուզէին յափշտակել պատրիարքական
աթոռը, ա՛մէն ապրէն միջոցներով, Պոլսոյ մէջ
ստեղծած էին վիճակ մը, որ բացարձակապէս անբազ-
ձալի էր:

Նոյն ատեն ձգտուած էին նաև էջմիածինի և
Կիլիկիոյ կաթողիկոսութիւններուն յարաբերութիւն-
ները, զորս կարգաւորելու համար Փիլիպպոս Աղբա-
կեցի կաթողիկոս (1633—1655) ուղեկիցներու շքա-
խումբով մը հասաւ Հալէպ, հոն հանդիպեցաւ Կիլի-
կիոյ ներսէս Սեբաստացի կաթողիկոսին (1648—1654)
և 1652ի Զատիկին միասին գացին Երուսաղէմ, բազ-
մաթիւ ուղեկիցներով և ուխտաւորներով:

(1) Խոճա Ռուհիճան վանեցի, որ աւխարհական տեղա-
կալներէն մին էր, մեծապէս նպաստած է նաեւ 1655—1657ի Երու-
սաղէմի վանքի փրկելու ձեռնարկին: